

Երվանդ Վարդանյան  
ԵՊՀ

Ջ. Գ. ԲԱՅՐՈՆԻ «ՉԱՅԼԴ ՀԱՐՈՒԴԻ  
ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹՅՈՒՆԸ» ՊՈԵՄԻ ԼԵԶՎԱՈՒՃԱԿԱՆ  
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ՀԱՅԵՐԵՆ  
ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՄԲ

Հոդվածում քննվում են Ջ. Գ. Բայրոնի «Չայլդ Հարոլդի ուխտագնացությունը» պոեմի լեզվաոճական առանձնահատկությունների վերաբերյալ որոշ հարցեր: Մասնավորապես նշվում է, որ պոեմի հիմնակազմիչ հունա-հռոմեական, աստվածաշնչյան և «խառը» լեզվաշերտերը, ինչպես նաև նրանց բանաստեղծական փոխակերպումները, իրենց լեզվաոճական առանձնահատկություններով պայմանավորված՝ պետք է դիտել մի կողմից որպես բանաստեղծի ինքնագիտակցման, իսկ մյուս կողմից՝ նրա գաղափարազեղազիտական հայեցակերպի և աշխարհագրացման կարևորագույն արտահայտչամիջոցներ:

**Հիմնաբառեր.** հունա-հռոմեական (միֆոլոգեմային), աստվածաշնչյան (սակրալ-արքետիպային), «խառը» լեզվաշերտեր, լեզվաոճական առանձնահատկություններ, բանաստեղծական փոխակերպումներ, փոխանունություն, շրջասություն, դարձվածք, համատեքստ, լեզվաբանաստեղծական վերլուծություն :

Անգլիացի մեծ բանաստեղծ Ջ. Գ. Բայրոնի ստեղծագործությունների շարքում իր թեմատիկ-բովանդակային ընդգրկմամբ և լեզվառճական ու լեզվարտահայտչական միջոցների բազմազանությամբ իր ուրույն տեղն ունի «Չայլդ Հարոլդի ուխտագնացությունը» պոեմը<sup>1</sup> (հայ. թրգմ.՝ Հ. Սևան):

Ինչպես հայտնի է, Ջ. Գ. Բայրոնի պոեզիայի հիմնակագրմիջ լեզվաշերտերը երկուսն են՝ հունա-հռոմեական (միֆոլոգեմային) և աստվածաշնչյան (սակրալ-արքետիպային): Դրանցից բացի, Բայրոնի բանաստեղծական բառապաշարի անքակտելի մասը կազմող, այսպես կոչված, միֆոլոգեմա-սակրալ-արքետիպային լեզվաշերտերը, որոնք ներառում են և՛ հունա-հռոմեական և՛ աստվածաշնչյան բառամիավորներ, սույն հոդվածում պայմանականորեն անվանվել են «**խառը**»՝ նկատի ունենալով, մի կողմից, նրանց «*երկկողմ*» կամ «*երկշերտ*» բնույթը, իսկ մյուս կողմից՝ նրանց *արքետիպային անորոշությունը*:

Այսպիսով, հոդվածում քննվում են «Չայլդ Հարոլդի ուխտագնացությունը» պոեմի հունա-հռոմեական, աստվածաշնչյան և «խառը» լեզվաշերտերը (անշուշտ, նաև նրանց բանաստեղծական փոխակերպումները) ներկայացնող առավել ցայտուն մի քանի օրինակ միայն՝ հայերեն թարգմանության զուգադրմամբ, *մեկնարկեստային* (հերմենևտիկ) ուսումնասիրության դիտանկյունից և *լեզվաբանաստեղծական վերլուծության* մեթոդով փորձելով վերհանել ու բնորոշել դրանց լեզվառճական առանձնահատկությունները:

Հունա-հռոմեական առասպելներից սերող միֆոլոգեմները, որոնք կազմում են Ջ. Գ. Բայրոնի բանաստեղծական բառապաշարի մի զգալի մասը, լեզվական մակարդակում կարող են համարվել *կայուն* կամ *ազատ* բառակապակցություններ, ինչպես, օրինակ, «չքնաղ մուսա», «դուստր ոսկեհեր» կապակցությունները «Չայլդ Հարոլդի ուխտագնացությունը» պոեմի առաջին նվագի առաջին իննյակում.

“Oh! thou! in Hellas deemed of heavenly birth,  
Muse! formed or fabled at the Minstrel's will!..”

«Ո՛վ չքնաղ մուսա, երկնային ծնունդ,  
 Հույն երգիչների դուստր ոսկեհեր...»

Ընդգծյալները կայուն բառակապակցություններ են. *մուսա* միֆոլոգեմը՝ իր *չքնաղ* մակդրի հետ և մեկ միասնական կայուն բառակապակցություն կազմող «դուստր ոսկեհեր» միֆոլոգեմային կապակցությունը, որը, փաստորեն, «մուսա»-ի մի այլ անվանումն է (փոխանունություն): Առաջին դեպքում միֆոլոգեմը («մուսա») կարող է հանդես գալ նաև միայնակ, իսկ երկրորդում՝ ոչ, քանի որ «դուստր»-ը միայն «ոսկեհեր» մակդրով է, որ հիշեցնում է Ջեսի և Մենմոսինեի (հիշողության աստվածուհու) դուստրերին՝ Ապոլոնի ուղեկից ինը մուսաներին կամ նրանցից որևէ մեկին՝ Կալիոպեին, Էվտերպեին կամ Էրատոնին... (տե՛ս «Դիցաբանական բառարան», 1985:162): Եթե առաջինը («չքնաղ մուսա») կարելի է հասկանալ նաև համատեքստից դուրս և այն էլ ուղղակի՝ «մուսա» իմաստով, ապա երկրորդը հասկացվում է միայն ամբողջական բանաստեղծի («հույն երգիչ-

ների դուստր ոսկեհեր») համատեքստում: Այսպիսով, կարելի է ասել, որ առաջինը կայուն կապակցություն է, և, որպես այդպիսին, փոխանցվել է ժամանակի ընթացքում, կիրառվել պոեզիայում ու արձակում, ինչպես նաև ունեցել իր գեղարվեստական մարմնավորումները (գեղանկարչություն, քանդակագործություն և այլն), մինչդեռ երկրորդը՝ «ոսկեհեր» մակդրով և «հույն երգիչների» հատկացուցիչով, փոխանունություն է (մետոնիմիա), թեև կարող է դիտվել նաև որպես շրջասություն (պերիֆրազ): Ամեն դեպքում այն այլաբերության (տրոպ) տեսակ է, և, մեր կարծիքով, *փոխանունություն*՝ կազմված *շրջասությամբ*<sup>2</sup>:

Հաջորդ օրինակում ունենք.

“Though here no more Apollo haunts his Grot...”

(I – LXII)

«... իր պերճ դղյակին

Ապոլլոնն էլ չի այցելում կրկին...»

(1– 62)

Այս առնչությամբ նշենք, որ Բայրոնի պոեզիայում, ընդհանրապես, (իսկ «Չայլդ Հարոլդի ուխտագնացությունը» պոեմում, մասնավորապես), «Ապոլլոնը»՝ որպես միֆոլոգեմ հաճախ հանդես է գալիս ոչ միայն առանձին, այլ նաև իրեն բնորոշ հատկանիշներով՝ «ոսկեգանգուր», «նետաձիգ», «դափնեկիր» և այլն, ձեռքին՝ ոսկելար կիթառ. որպես «լույսի աստված», պոեզիայի ու երաժշտության հովանավոր, նաև իբրև «կանխատես», որի անունով գուշակություններ էին անում դելփյան (Դելփիիքի) պատգամախոսները:

Բերենք ևս մի օրինակ.

“Thine olive ripe as when Minerva smiled...”

(II – LXXXVII)

« ... Թեև չի ժպտում Միներվան դարձյալ...»

(2 – 87)

*Միներվա* միֆոլոգեմը այստեղ հանդես է գալիս առանց իր հիմնական ատրիբուտների («իմաստուն», «գիշերային» և այլն): Ուշագրավ է, որ այն և՛ առանձին և՛ իր ատրիբուտներով, լայնորեն կիրառվել է եվրոպական, ռուս (Ա. Ս. Պուշկին) և հայ (Ե. Չարենց) պոեզիայում: Անշուշտ, խոսքը վերաբերում է ոչ միայն Միներվային, այլև, ընդհանրապես, անտիկ առաս-պելների առանցքային միավորների՝ *միֆոլոգեմների* բանաստեղծական կիրառությանը, որով լուծվում է երկու հարց. նախ, գաղափարազեղագիտական ընդհանուր դաշտը «թարմանում» է միֆոլոգեմի նոր կիրառմամբ, ապա և հարստանում է տվյալ ազգային լեզվի բառապաշարը: <sup>3</sup>

Անցնենք Ջ. Գ. Բայրոնի «Չայլդ Հարոլդի ուխտագնացությունը» պոեմի աստվածաշնչյան լեզվաշերտերի քննությանը և գուգադրելով հայերեն թարգմանության հետ՝ նախ ընդգծենք նրանց մերձակցությունը կամ հեռացումը իրենց սկզբնաղբյուր-արքեստիպերից, ապա փորձենք դրանք ենթարկել լեզվաբանաստեղծական վերլուծության.

“There thou too, Vathek! England's wealthiest son,

Once formed thy Paradise...” (I – XXII)

«Շինեցիր, Վատե՛կ, դրախտ ոսկեհուռ...» (1 – 22)

“There your wise Prophet's Paradise we find,  
His black-eyed maids of Heaven, angelically kind.”

(I – LIX)

«Այստե՛ղ է չքնաղ դրախտն երանյաց,  
Հրեշտակներ կան այստեղ սրաքբաձ»:

(1 – 59)

Բերված օրինակներում աստվածաշնչյան հասկացություններ են «դրախտը» և «հրեշտակները»: Առաջին օրինակի բնագրում բացակայում է «ոսկեհուռ» մակդիրը, որը թարգմանիչը «ներմուծել» է բանաստղի տաղաչափությունը և հանգը պահպանելու համար: Երկրորդի թարգմանությունն ավելի համարժեք է բնագրին, քանի որ հիմնականում պահպանվել են բայրոնյան մակդրավորումները:

Բերենք ևս մի օրինակ.

“To view each loved one blotted from Life's page...” (II – XCVIII)

«Կյանքի մատյանից տարիներ ի վեր  
Ջնջվում են մեկ-մեկ ծանոթ անուններ»  
(2 – 98)

Կյանքի մատյանը նույն աստվածաշնչյան կենաց գիրքն է («...և ուրիշ մի գիրք էլ բացվեց, այսինքն՝ կյանքի գիրքը...», Հայտն. 20:12): Սա այն դեպքն է, երբ սուրբգրային ընկալմամբ՝ սակրալ առարկան, անձը կամ երևույթը, որպես կայուն բառակապակցություն, մուտք է գործել քրիստոնյա ժողովուրդների լեզվի և այդ լեզվական ինքնությունը լավագույնս ներկայացնող բանաստեղծական բառապաշարի

մեջ: Ընդ որում, նշյալ կապակցություններում ոչ միայն պահպանվել է արքետիպը, այլև դրվելով ժամանակային ու գաղափարագեղագիտական նոր իրավիճակում՝ ձեռք է բերել թարմ իմաստավորումներ:

“How that red rain hath made the harvest grow!

And is this all the world has gained by thee...”

(III – XVII)

«...Մի թե դու հեղեղ թափեցիր արյան, Մե՛ծ ճակատամա՛րտ,

Որ տեսներ աշխարհին արյան հունձք առատ»:

(3 – 17)

Երկու դարձվածքներն էլ՝ «հեղեղ արյան» և «արյան հունձք», ըստ ամենայնի, ունեն աստվածաշնչյան ծագում (թեև «արյունը» սուրբ է համարվում նաև հունա-հռոմեական առասպելներում): Ըստ այդմ, կարելի է բերել աստվածաշնչյան հետևյալ օրինակները. «Արդ, անիծեալ լինես երկրի վրայ, որը բացեց իր բերանը եղբորդ՝ քո ձեռքով թափած արիւնն ընդունելու համար» (Մանդ. 4:11), «Եվ հրեշտակը նետեց իր գերանդին երկրի վրայ, քաղեց նրա խաղողը և գցեց Աստծու մեծ հնձանի մեջ: Եւ հնձանը կոխտտուեց քաղաքից դուրս. եւ հնձանից արիւնը հոսում ու բարձրանում էր մինչեւ ձիու սանձերը. եւ նրա երկարութիւնը երեք հարիւր կիլոմետր էր» (Հայտն. 14. 19-20, ընդգծումը մերն է՝ Ե. Վ.):

Հայերենում տարածված հարադրական դարձվածքներ են «արյուն հեղել», «արյուն որթել», «արյուն թափել», «արյուն

ծով դարձնել» և այլն, անզլերենում՝ “shed blood”, “shed blood like water” և այլն: Այս իննյակի անզլերեն դարձվածքը (ասում ենք «դարձվածք», քանի որ այլևս չի գիտակցվում «արյան» միֆոլոգեմ լինելու հանգամանքը, թեև դարձվածքը կառուցված է հենց դրա հիման վրա) հայերեն թարգմանվել է գրեթե նույնությամբ, ինչն ակներևորեն ապացուցում է նույն աղբյուրից դրա սերված լինելը:

“There is a very life in our despair...” (III – XXXIV)

«Կյանքի աղբյուր կա հուսահատության

Այրող պահերին...» (3 – 34)

«Կյանքի աղբյուրը» միֆոլոգեմա - սակրալ - արքետիպային դարձվածք է (այսպես կոչված, «խառը» լեզվաշերտ), որն ունենալով իր առասպելական և աստվածաշնչյան արքետիպերը, լայնորեն շրջանառվում է թե՛ անզլերենում և թե՛ հայերենում: Կարծում ենք, սակայն, որ բայրոնյան բանաստղերը հիմնականում սերում են Սուրբ Գրքից: Այս կապակցությամբ, աստվածաշնչյան ասույթներից վերհիշենք մեկ-երկուսը. «Տե՛ր, քեզնից է կեանքի աղբիւրը» (Սաղմ. 35:10), «...ժողովուրդն ինձ՝ կենաց ջրի աղբիւրիս, լքեց...» (Երեմ. 2:13) և այլն (ընդգծումները մերն են՝ Ե. Վ.):

Այս դարձվածքը հայերենում շրջանառվում է մի շարք այլ տարբերակներով՝ «անմահական աղբյուր», «կյանքի գետ», «սուրբ աղբյուր» և այլն: Ինչ վերաբերում է բայրոնյան բնագրին և նրա թարգմանությանը, ապա պետք է ասել, որ երկուսն էլ հետևում են վերոնշյալ ավանդույթին: Բուն միֆոլոգեմն է «աղբյուրը» («ջուրը»), որը սովորաբար



մենակ հանդես չի գալիս, այլ՝ «կյանքի» հետ միասին: Ըստ էության, «կյանքի աղբյուր»-ը այն դարձվածքներից է, որոնք լինելով *կայուն* կապակցություն, «դժվարահաճ» են բանաստեղծական որևէ նորամուծության կամ հոմանիշային այլ դրսևորման նկատմամբ, ուստի և կիրառվում են հիմնականում նույն՝ ավանդական ձևով:

Ջ. Գ. Բայրոնի «Չայլդ Հարոլդի ուխտագնացությունը» պոեմում կան բազմաթիվ, այսպես կոչված, «խառը» լեզվաշերտեր (միֆոլոգեմա-սակրալ-արքետիպային կամ «երկշերտ» միավորներ, որոնք ներառում են և՛ հունա-հռոմեական և՛ աստվածաշնչյան լեզվաշերտեր): Օրինակ.

“A Cherub-Hydra round us dost thou gape...”

(I – LXV)

«Դու կյանքում հիդրա, քերովբե անբիծ...

(1 – 65)

Հին հունական առասպելից ավանդված «հիդրայի» և աստվածաշնչյան «քերովբեի» միացման այս ուշագրավ պատկերը հայերենում, թերևս, կարելի էր թարգմանել պարզապես «հիդրա-քերովբե» կապակցությամբ (հարագատ մնալով բնագրին և պահպանելով բնագրային «*օքսիմորոն*»<sup>4</sup> դարձույթը), ինչը հայ թարգմանիչը չի արել իր ընտրած «անբիծ» որոշյի պատճառով, որը վերաբերում է միայն քերովբեին, մինչդեռ գծիկով միացած «հիդրա-քերովբե»-ի պարագայում, «անբիծը» կվերաբերեր երկուսին էլ: Ռուսերեն թարգմանիչը (Վ. Լևիկ) ընտրել է այլ ուղի՝ “Вампир с улыбкой херувима ясной” (Байрон Дж. Г.,

1985:141): Առանձին-առանձին, «հիդրա»-ն և «քերովբե»-ն լայնորեն շրջանառվում են թե՛ անգլերենում, թե՛ հայերենում: XIX-XX դդ. բանաստեղծական երկերում դրանք հանդես են գալիս առավելապես որպես միֆոլոգեմներ, կայուն բառ-հասկացություններ, որոնք, որպես այդպիսիք, կարող են ունենալ ինչպես ավանդված հատկանիշներ (օրինակ, «բազմագլխյան»՝ հիդրայի, «վեցթևյան»՝ քերովբեի համար), այնպես էլ սուբյեկտիվ-հեղինակային բնութագրումներ: Նման բնութագրումներ կան նաև Բայրոնի պոեզիայում, պայմանավորված ավանդության-կաղապարային բառաձևերին զուգահեռ՝ նորանշանակ, թարմ ձևեր կիրառելու բանաստեղծի հակվածությամբ:

Բերենք ևս մի օրինակ.

“Long ere the first loud trumpet’s note is heard...”

(I – LXXII

«Փողի հնչեցման դեռ կա ժամանակ...»

(1 – 72)

«Փողը» միֆոլոգեմ է, որն առկա է և՛ հունա-հռոմեական առասպելներում և՛ Աստվածաշնչում: Անտիկ առասպելներում «փող» (շեփոք) փչելը համարվել է ինչ-որ ժամանակի կամ գործողության սկիզբ կամ ավարտ: Փող են հնչեցրել պատերազմի կամ որսորդության ժամանակ, նաև՝ հանդիսավոր տոնախմբություններին: «Փողն» այս իմաստով պահպանվել է նաև Աստվածաշնչում. «Նրանք կարող են լեռը բարձրանալ միայն այն ժամանակ, երբ...փողի ձայնը երկար հնչի» (Ելք 19:13), «...Տիրոջը նուիրաբերուած մի

սուրբ տօն, որ շեփոքներով է ազդարարում» (Ղևտ. 23:24), «Յիսուսներորդ տարուայ եօթներորդ ամսի տասներորդ օրը շեփոք հնչեցնելով կազդարարէք...» (Ղևտ. 25:9), «Եւ եօթը հրեշտակները, որ ունէին եօթը փողերը, պատրաստուեցին դրանք հնչեցնելու» (Հայտն. 8:6) և այլն (ընդգծումները մերն են՝ Ե. Վ): Ընդ որում, ուշագրավ է, որ «Չայլդ Հարուլդ»-ի հայերեն թարգմանիչը նախընտրել է «*փողի հնչեցման*» ձևը՝ «փող հնչեցնել» կամ «փող հնչեցնելու» ձևին, սակայն, պահպանել է *փողի* հետ գոյականաբար կիրառված *հնչեցման* բառաձևը, որն Աստվածաշնչում սովորաբար հանդես է գալիս փողի հետ՝ կազմելով բայական հարադրություն: Հայերենում, (ինչպես և անգլերենում) կան «փող» միֆոլոգեմով և որևէ բայով կառուցված մի շարք հարադրություններ ու բառաբարդումներ («փող հնչեցնել», «փողհարել», «շեփորել», «շեփոր հնչեցնել» և այլն, անգլ՝. “sound trumpets”, “blow trumpets”, etc.), որոնց ստույգ արքեսիպերը (հունահռոմեական, թե՛ աստվածաշնչյան), ուղղակի հնարավոր չէ նշել:

“Is the spot marked with no colossal bust?  
Nor column trophied for triumphal show?”

(III – XVII)

«Կորավ կիսանդրին վեհ ու փառահեղ

Եվ սյունն հաղթության...»

(3 – 17)

«Սյունն հաղթության» բառակապակցությունը հունահռոմեական կամ այլ մշակույթներից սերված *միֆոլոգեմ*-

դարձվածք է: Բուն միֆոլոգերը «այունն» է՝ որպես երկնքի ու երկրի միջև ուղղահայաց կապի խորհրդանիշ: «Հաղթության» մակդիրը նրան տրվել է ի հաստատումն այն բանի, որ երկնքի հետ կապը նրան դարձնում է անպարտելի: «Սյուն» միֆոլոգերը հանդիպում է ոչ միայն բանահյուսական ստեղծագործություններում, այլև հին հունական առասպելներում (քարացած Նիոբեն) և Աստվածաշնչում. «Ղովտի կինը ետ նայեց ու դարձաւ աղէ արձան» (Ծննդ.19:26), «Աստուած ցերեկը նրանց առաջնորդում էր ամպի սիւնով..., իսկ գիշերը՝ հրէ սիւնով»...(Ելք 13:21), «Ով յաղթի, նրան իմ Աստծու տաճարին սիւն պիտի դարձնեմ...» (Հայտն. 3:12) և այլն (ընդգծումները մերն են՝ Ե. Վ):

But Thou, exulting and abounding river!  
Making thy waves a blessing as they flow  
Through banks whose beauty would endure for ever  
 Could man but leave thy bright creation so,  
 Nor its fair promise from the surface mow  
With the sharp scythe of conflict, – then to see  
 Thy valley of sweet waters, were to know  
Earth paved like Heaven ; and to seem such to me,  
 Even now what wants thy stream? – that it should  
Lethe be. (III – L)

Բայց շոռայլ ես դու, գե՛տ իմ թափանցի՛կ,  
Ջրերդ են բերում ամփիդ օրհնություն.  
 Այն պիտի մնար հավերժ գեղեցիկ,  
 Թե մարդ ձեռք չտար, թե ծաղկունքդ անհուն

Չինձեր կովի մանգաղն արնագույն,  
 Այնժամ քո կապույտ հովիտն աստղացող  
 Կթվար երկինք իմ ջահել հոգուն,  
 Թե Լետան քեզ տա մոռացման մի շող,  
 Ինձ կզգամ հիմա դրախտում դյուլթող:  
 (3 – 50)

Եթե «*Ջրերդ են բերում ավիդ օրհնությունն*» բանաստղը վերածենք դարձվածքի, ապա կունենանք «օրհնության ջուր» կամ «օրհնած ջուր» դարձվածքը: Բնագրին ավելի մոտ է ռուսերեն թարգմանությունը. “Источник жизни для своей страны” (Байрон Дж. Г., 1985:193): «Կովի արնագույն մանգաղը» կամ, պարզապես, «*կովի մանգաղը*» միֆոլոգեմային դարձվածք է, որի աստվածաշնչյան արքետիպը, կարծում ենք, հետևյալն է. «Եվ նա, ով նստել էր ամպի վրայ, շարժեց իր գերանդին երկրի վրայ ու հնձեց երկրի բոլոր բնակիչներին» (Հայտն.14:16)<sup>5</sup>:

Թե՛ հայերենի, թե՛ անգլերենի գործունե գրույթներից է հին հունական «*Լետա*» (Լեթա) գետ-միֆոլոգեմն՝ իր «մոռացության» որոշչով: Այս գետն իր հատկանիշներով սերում է ոչ միայն հին հունական առասպելներից, այլև ունի նաև աստվածաշնչյան արքետիպ. մասնավորապես, նրա «օրհնաբեր» կամ «կենաց աղբյուր» լինելը, կարծում ենք, աստվածաշնչյան դրախտաբուխ գետերի (տե՛ս Ծննդ. 2:10-14) բանաստեղծական վերհուշն է: Այս իննյակում կա նա մի միֆոլոգեմ՝ «*դրախտ*», որի մասին վերևում արդեն խոսվեց. այս անգամ այն հայերեն թարգմանության մեջ հանդես է

գալիս «ոյութոդ» մակդրով՝ ընթերցողի մեջ կարծես արթնացնելով չգրված բանաստեղծական մի կապակցություն՝ «*դյութական դրախտ*»: Բայրոնյան «Լետա»-ն, այսպիսով, առասպելականից «տեղափոխվում» է ռեալ, կենսական ոլորտ՝ պարուրված ռոմանտիկ պոետին բնորոշ անրջականությամբ:

Ամփոփելով հոդվածը նշենք, որ Ջ. Գ. Բայրոնի «Չայլդ Հարոլդի ուխտագնացությունը» պոեմի հիմնակազմիչ հունա-հռոմեական (միֆոլոգեմային), աստվածաշնչյան (սակրալ-արքետիպային) և «խառը» լեզվաշերտերը, իրենց լեզվառճական առանձնահատկություններով պայմանավորված՝ հանդես են գալիս որպես բանաստեղծի ինքնագիտակցման, աշխարհ-ընկալման, և, ընդհանրապես, գաղափարագեղագիտական-աշխարհայացքային հայեցակերպի կարևորագույն արտահայտչամիջոցներ:

### Ծանոթագրություններ

1. «Չայլդ Հարոլդի ուխտագնացությունը» ռոմանտիկ պոեմը (“Childe Harold’s Pilgrimage” – A Romaunt), Ջ. Գ. Բայրոնը գրել է 1810-1812թթ. (I-II նվազ) և 1816-1817թթ. (III-IV նվազ): Չորս նվազից բաղկացած այս պոեմը գրված է, այսպես կոչված, «սպենսերյան տներով» (“stanza of Spenser”), որն առաջինը կիրառել է XVI դարի անգլիացի մեծ բանաստեղծ Էդմունդ Սպենսերը (Edmund Spenser, 1552-1599)՝ իր

նշանավոր “The Faerie Queene” պոեմում: Սա տաղաչափական բարդ համակարգ է՝ գրված ինը տողանի և տասը վանկանի յամբական տներով՝ ababbcbcc հանգավորմամբ: Բանաստեղծական այս ձևն աչքի է ընկնում ճկունությամբ և հնչերանգային բազմազանությամբ, որը պոետին իր խոհերը, զգացմունքներն ու հույզերը համակողմանիորեն դրսևորելու մեծ հնարավորություն է ընձեռում: Այս արժանիքները հրապուրել են նաև Բայրոնին, որը, կատարելապես տիրապետելով այս տեխնիկային, հրաշալիորեն միավորել է պոեմի էպիկական շունչը (ասքայնությունը) և վեհ քնարականությունը:

2. Ինչպես հայտնի է, շրջասությունը (պերիֆրազ) ոչ թե առանձին ռճական միավոր է, այլ փոխանունություն կազմելու միջոց (երբ պարունակյալի փոխարեն տրվում է պարունակողը, օր՝ . «քաղաքն արթնացավ», երբ հոգեկան ապրումի փոխարեն նշվում է երևույթը, օր.՝ վշտանալու փոխարեն՝ «արցունք թափել» և այլն): Այլ կերպ ասած՝ շրջասությունը փոխանունություն կազմելու միջոցներից է, երբ բուն առարկան, անձը կամ երևույթը նշելու փոխարեն տրվում են նրա հատկանիշները:

3. Ասվածի վառ վկայությունը միֆոլոգեմների չարենցյան կիրառություններն են «Դիստի-քոսներ» շարքից.

«Ո՛չ ակունքները Դելփյան, ո՛չ կախարդանքը Պանի  
Չեն հոչակի քեզ պոետ, եթե խորթ է հոգուդ  
առօրյան:»

\* \* \*

«Ֆավն ու նիմֆեր ու սրինգ - երգ և տավիղ  
քաղցրաձայն...

Մի թե աղբյուրդ չուներ – տիղմ ու թախիժ,  
Ապուր՛ն:»

(Չարենց Ե., 1984:573, 576)

(ընդգծումը մերն է՝ Ե.Վ.)

Չարենցի կիրառած միֆոլոգեմները (Նավզիկե, Թերսի-  
դես, Ուլիս, Աքիլլես, Հելիկոն...) և նրանց տրված բնորոշո-  
ւմները հարստացրել են հայոց լեզվի բառապաշարը, ընդ-  
լայնել հայերենի լեզվամտածողության ու լեզվաոճական  
հնարավորությունների շրջանակը: Միֆոլոգեմները և  
դրանց համապատասխան բնորոշումները (օրինակ, ֆավ-  
նին բնորոշ «երգեցիկ ձայնը»՝ Եղ. Չարենցի «Ես վախենում  
եմ, ինչպես նեկրոման...» բանաստեղծության մեջ, որտեղ  
ասվում է. «...ու Ֆավնի ձայնով երգեցիկ...», նույն տեղում,  
էջ 450), լեզվի բառապաշարում արմատավորվում և այնու-  
հետև նորանոր պատշաճեցումներով ու իմաստային երան-  
գավորմամբ շրջանառվում են ոչ միայն ինքնուրույն (ազ-  
գային) գրականության զարգացման ընթացքում, այլև  
թարգմանությունների միջոցով: Ամեն դեպքում, թարգման-  
վող միֆոլոգեմները և միֆոլոգեմային բնութագրիչներն  
«ազգայնացվում են», մեր պարագայում՝ «հայերենացվում»,  
ենթարկվելով տվյալ լեզվի ավանդույթներին և ձևաբանա-  
շարահյուսական ու լեզվաոճական առանձնահատկու-  
թյուններին:



4. Օքսիմորոնը (նրբաբանություն) ոճական դարձույթ է՝ կառուցված հակիմաստ բառերի հարադրությամբ. օր.՝ **Պերճախոս լռություն, դառն երջանկություն, լուսավոր թախիժ** և այլն (տե՛ս Խլղաթյան Ֆ. Հ., «Ոճաբանական տերմինների բառարան-տեղեկատու», էջ 74):

5. Աստվածաշնչի այլ թարգմանություններում (օրինակ՝ Մոսկվա, 1994), «գերանդու» փոխարեն «մանգաղ» է. «Ան որ ամպին վրայ էր, իր մանգաղը երկրի վրայ երկնցուց ու երկիրը հնձուեցաւ» (Հայտն.14:16): Աստվածաշնչի անգլերեն տարբերակում ('King James Version'), ևս, ունենք «մանգաղ» ("And he that sat on the cloud thrust in his sickle on the earth; and the earth was reaped," Rev.14:16):

## Գրականություն

1. *Աստուածաշունչ, Մատենան Հին ԵՒ Նոր Կտակարանների*, Մայր Աթոռ Սբ. Էջմիածին ԵՒ Հայաստանի Աստուածաշնչային ընկերություն, 2004:
2. *Աստուածաշունչ, Մատենան Հին ԵՒ Նոր Կտակարանների*, Մոսկվա, 1994:
3. Բայրոն Ջ. Գ. , *Երկերի ժողովածու*, Ե., «Հայաստան», 1965:
4. Բոսովիննիկ Ս. Ն., Կոզան Մ. Ա., Ռաբինովիչ Մ. Բ., Սելեցկի Բ. Պ., *Դիցարանական բառարան*, Ե., «Լույս», 1985:
5. Խլղաթյան Ֆ. Հ., *Ոճարանական տերմինների բառարան-տեղեկատու*, Ե., «Լույս», 1976:
6. Չարենց Ե. , *Պոեմներ: Բանաստեղծություններ*, Ե., ԵՊՀ, 1984:
7. Байрон Дж. Г. , *Избранное*, М. “Правда”, 1985.
8. Byron G. G. (1956) *Childe Harold's Pilgrimage*, М., Foreign Languages Publishing House.
9. Lord Byron (2005) *Selected Poems*, Penguin Books.
10. *The Holy Bible*, Authorized King James Version (1989), N. Y.

**YERVAND VARDANYAN - Linguostylistic Peculiarities of G. G. Byron's Poem "Childe Harold's Pilgrimage" in Armenian Translation** - The article deals with some problems concerning the linguostylistic peculiarities of basic language layers in Lord Byron's poem "Childe Harold's Pilgrimage" compared with Armenian translation. In particular, it is stated that as basic constituents of Byron's poetry in general, Greco-Roman (mythologemic), biblical (sacral-archetypal) and 'mixed' language layers, as well as their poetic transformations are important means of expressing the poet's ideas and aesthetic views, of revealing his self-consciousness and, broadly speaking, world perception.

**Key words:** Greco-Roman (mythologemic), biblical (sacral-archetypal), 'mixed' language layers, linguostylistic peculiarities, poetic transformations, metonymy, periphrasis, phrase, context, linguopoetic analysis.

**ԵՐՎԱՆԴ ՎԱՐԴԱՆՅԱՆ – Лингвостилистические особенности поэмы Дж. Г. Байрона “Паломничество Чайльда-Гарольда” в переводе на армянский язык** - В статье рассматриваются некоторые проблемы исследования лингвостилистических особенностей основополагающих языковых пластов в поэме Дж. Г. Байрона “Паломничество Чайльда-Гарольда” в сопоставлении с армянским переводом. В частности отмечается, что составляющие неотъемлемую часть поэмы (как, впрочем, и всего творчества Байрона) греко-римские, библейские и “смешанные” языковые пласты, а

*также их поэтические трансформации, являются важнейшими средствами самовыражения, идейно-эстетических воззрений, и, в целом, мировосприятия поэта.*

**Ключевые слова:** *греко-римские (мифологемные), библейские (сакрально-архетипные), “смешанные” языковые пласты, лингвостилистические особенности, поэтические трансформации, метонимия, перифраз, фраза, контекст, лингвопоэтический анализ.*